Խաղաղություն
ՓԼՈՍՏԵՐ, ԹՎԵՐ, ԴԵՊՔԵՐ...

Տարբեր մտերմություններ են լինում. ոմանք սիրում են շներ, մյուսները՝ կատուներ, ուրիշները՝ դեղձանիկներ: Հնդկական Շիրալա գյուղի (Բոմբեյի նահանգ) բնակիչները գերադասում են պահել կոբրաներ:

Տարին մեկ անգամ օձասերները հավաքվում են տրադիցիոն տոնակատարության: Այդ տոնակատարության ամենահետաքրքիր մասը օձավարն է: Սափորները, որոնց մեջ գտնվում են կոբրաները, դասավորում են ստարտի գծի վրա: Դատավորի ազդանշանով մրցության թունավոր մասնակիցները դուրս են սողում սափորներից և, հնազանդվելով տիրոջ փայտիկին, «վազանցում» են նշված ճանապարհը, շրջվում և վերադառնում սափորների մեջ: Կոբրաները գրեթե երբեք չեն խայթում իրենց տերերին: Բայց օտար մարդու համար դրանց մոտենալը վտանգավոր է:





Անգլիա ժամանեցին Տրիստան դը Կունյա կղզու մի քանի բնակիչներ: Այդ կղզին ոչնչացել է վերջերս տեղի ունեցած հրաբխային ժայթքման հետևանքով: Այն գտնվում էր Ատլանտյան օվկիանոսում՝ Բարեհուսո հրվանդանի և Հարավային Ամերիկայի միջև ընկած ճանապարհի մեջտեղում: Կղզում բնակվել է մի քանի հարյուր մարդ: Նրանք բոլորը կրել են 18-րդ դարի տարազ և նրանցից ոչ մեկն իր կյանքում չի տեսել ոչ ինքնաթիռ, ոչ ավտոմոբիլ, ոչ էլ ռադիոընդունիչ:

Հասարակածը, ինչպես հայտնի է, մտովի անցկացված շրջանագիծ է, որը երկրագնդի մակերևույթը բաժանում է հյուսիսային և հարավային կիսագնդերի: Գլոբուսների և քարտեզների վրա հասարակածը նշված է հաստ գծով: Իսկ ինչպիսի՞ն է այն կյանքում: Քենիայում, Նայրոբիից 120 մղոն հեռավորության վրա կա մի հյուրանոց (կոչվում է այն «Սիլվերբեկ»), որը գտնվում է ուղիղ հասարակածի վրա: Այդ հյուրանոցի ճաշարանի հաճախորդները կարող են խմել մի կիսագնդում, ուր գտնվում է վաճառասեղանը, իսկ ուտել՝ մյուս կիսագնդում:

digitised by A.R.A.R.@

Դանիայում շատ են սիրում դաճուկային տպորտը, չնայած այնտեղ շատ հավվադեպ ու քիչ է ձյուն տեղում: Այդ պատճառով, մրցումներ անցկացնելու համար, ձյունը փոխադրամիջոցներով բերում են... Նորվեգիայից:

Ֆրանկֆուրտի կենդանաբանական այգում արդեն սովորական երևույթ են... արևադարձային ամպրոպները: Ամեն օր առավոտյան ժամը տասին և երեկոյան ութին ճայթյունով որոտում է ժապավենի վրա ձայնագրված ամպրոպը և հատուկ ծորակներից հորդում են ջրի շիթերը՝ խառնվելով տաք օդի հետ: Արհեստական ամպրոպներ կենդանաբանական այգում առաջացնում են կոկորդիլոսների համար, որպեսզի նրանք այստեղ զգան իրենց ինչպես տանը:



Անգլիայում հիմա քննվում է «Գրքի փոխառման օր» սահմանելու մասին առաջարկը: Այդ օրը բոլոր անգլիացիները ստուգելով իրենց գրադարանները, պարտավոր են ուրիշի գրքերը փոստով վերադարձնել իրենց տերերին:

Նամակների և լրագրերի արկղները երևան են եկել 400 տարի առաջ: Դրանք ամրացվել են Ֆլորենցիայի քաղաքադռանը և ծառայել են «Սատանաների հետ հարաբերության մեջ գտնվող» գիտնականների և դավաճանության մեջ մեղադրվող քաղաքական գործիչների ու փիլիսոփաների հասցեին գրված անանուն մատնությունների համար:

digitised by A.R.A.R.@